ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«31» 03 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 0028-22

***Ձեռնարկողը՝*** ***«Էյ Դի Մայնինգ» ՍՊԸ***
*Արագածոտնի մարզ, գ. Դավթաշեն, 4 փ., 2 նրբ. փ. 1*

***Գործունեությունը՝*** ***Շղարշիկի փուֆերի հանքավայրի «Արևմտյան» տեղամասում 2021-2023թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*ՀՀ, Արագածոտնի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0028-22

<31> 03 2022 թ.

**Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆերի հանքավայրի «Արևմտյան» տեղամասում 2021-2023թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «Էյ Դի Մայնինգ» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Արագածոտնի մարզ, Շղարշիկ համայնք |

**Ներածական մաս.** Շղարշիկի տուֆերի հանքավայրի Արևմտյան տեղամասի երևակումը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Շղարշիկ գյուղի վարչական տարածքում, և զբաղեցնում է 8.8հա մակերեսով տարածք: Հեռավորությունը Եղնիկ գյուղի ամենամոտ բնակելի տարածքներից կազմում է 506մ, Շղարշիկ գյուղի բնակելի տարածքներից՝ 1.06կմ: Երևակման տարածքը գտնվում է 1825-1900մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասը ասֆալտապատ ճանապարհով կապված է Շղարշիկ գյուղին (1.6կմ), մարզկենտրոնին ք. Աշտարակին (37կմ): Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով, ըստ գործառնական նշանակության դրանք արոտավայրեր են:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվում է կատարվել տեղամասի տարածքի 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 8.8հա մակերեսով տարածքում: Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարում երևակման ընդհանուր տարածքում, նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն 9479-98 և 4001-98 ԳՕՍՏ-երի տեխնիկական պահանջներին՝ դրանց պիտանելիությունը որպես երեսապատման և ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային

թագիկներով, 96մմ և 112մմ տրամագծերով, ԿԱՄԱԶ 4310 տիպի ինքնագնաց հորատող սարքի միջոցով: Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք մինչև 20.0մ խորությամբ, ընդհանուր 160.0մ, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%:

Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

- ալյուվիալ, դելյուվիալ նստվածքներ և ուժեղ ճեղքավորված ու հողմնահարված տուֆեր
- IV կարգ, - թարմ, թույլ ծակոտկեն և թույլ ճեղքավորված տուֆեր – VII կարգ:

Նախատեսվում է հորատող հաստոցի 8 տեղակայում և տեղահանում: Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 150.0 խ.մ. թարմ չհողմնահարված տուֆերից:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 26 հանուկային նմուշ մինչև 5.0մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, 4 նմուշ մերկացումներից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար: Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆերի երևակման ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն է.

Հայցվող տարածքի
եզրակետերի կոորդինատները

| Հ/Հ | Կոորդինատները | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 4474507.1 | 8410510.4 |
| 2 | 4474561.7 | 8410540.0 |
| 3 | 4474613.6 | 8410575.5 |
| 4 | 4474650.5 | 8410647.6 |
| 5 | 4474723.2 | 8410693.8 |
| 6 | 4474795.2 | 8410733.1 |
| 7 | 4474838.5 | 8410720.9 |
| 8 | 4474881.6 | 8410719.1 |
| 9 | 4474980.1 | 8410769.6 |
| 10 | 4475006.0 | 8410805.1 |
| 11 | 4475039.3 | 8410835.8 |
| 12 | 4475064.3 | 8410851.5 |
| 13 | 4475022.2 | 8410931.6 |
| 14 | 4474776.8 | 8410904.3 |
| 15 | 4474697.0 | 8410824.0 |
| 16 | 4474493.3 | 8410643.0 |
| 1 | 4474507.1 | 8410510.4 |

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ: Հաշվի առնելով տեղամասի ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում և հորատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ երևակման ամբողջ տարածքում СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողաբուսաշերտի ծավալը կազմում է 81մ3 (45.0մ x 9.0մ x 0.2մ): Հորատման հարթակներ չեն կառուցվելու, իսկ հաստոցի տեղակայման վայրերում կկատարվի փխրեցում, սերմերի ցանք: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման և հաստոցի տեղակայման վայրերի փխրեցման համար ընկերության կողմից նախատեսվում է 162000 դրամ գումար:

Երևակման տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար գումարները (տարեկան 250.0հազ.դրամ) ներառված են ընկերության շահագործական ծախսերի կազմում:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի և պատմամշակութային հուշարձանի սահմաններում:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

-վառելիքի լիցքավորումը, ինչպես նաև մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում, որտեղ և հանձնվելու են փոխված քսայուղերը, սպառողական հատկությունները կորցրած յուղերը,

-կենցաղային աղբը կհավաքվի հատուկ անթափանց տոպրակների մեջ և կտեղափոխվի աղբավայր (նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ),

-փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (փորձնական բացահանքի տարածք, ճանապարհ) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

-խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է ավտոտրանսպորտով՝ պայմանագրային հիմունքներով,

-կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,

-փորձնական բացահանքի տարածքից նախապես 0.2մ հզորությամբ հողային շերտի հեռացում, կուտակում անմիջապես բացահանքի հարևանությամբ և օգտագործում հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների համար: Խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանական ուսումնասիրության ավարտից հետո,

- բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում,
-աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծում՝ հանդերձարան, սեպտիկ հոր և հանգստի սենյակ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Էյ Դի Մայնինգ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ:
-լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
-հարակից ձորի հիդրոլոգիական մշտադիտարկում,
-կենսաբազմազանության մշտադիտարկում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլիացիայի փոփոխություն (հստակ դիտարկման կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
-աղմուկի մակարդակի չափումներ :

**Պատճառաբանական մաս.** Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էյ Դի Մայնինգ» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆերի հանքավայրի «Արևմտյան» տեղամասում 2021-2023թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան